ԱՎԱՆԴԱԿԱՆ ՀԵՐՈՍԻ ՆՈՐ ՏԱՐԲԵՐԱԿ

ՍԱՆԹՈՅԱՆ Մ.Գ.

Գրական կերպարների համաշխարհային պատկերասրահում մեր ազգային ներդրումներից մեկը էպոսային Դավիթն է, մյուսը՝ նրա կերպարային հակոտնյա Նազարը: Դրական հետաքրքրությունը սրանց նկատմամբ չի նվազում անգամ բնական ու հասարակական աղետների, ցնցումների պահերին: Եվ եթե Սասունցի Դավթի մերօրյա զուգահեռները կովում են հայրենիքի տարբեր ռազմաճակատներում, ու նրանց գրական «մշակումները» մշակութային, հոգու պարտքին հավասարազոր հարց են՝ նաև արժանի ապագա կոթողային մարմնավորումների, ապա Դավթի կերպարային հակոտնյա Նազարը ևս առանձին իրականություն է դարձել, ուստի և զարմանալի չէ, որ նորօրյա նազաբության ու իշխող, տնտեսական-չարչիական նորաթուխ նազարների առատության այս շրջանում գրական ասպարեզ են իջնում Քաջ Նազարին առնչվող գրական նոր մշակումներ ու տարբերակներ: Մ. Սարգսյանի վեպ-հեքիաթին[1] հաջորդեց Վ. Արամյանի հեքիաթ-վիպակը[2]: Ահա գրքի կազմէջի բանալին. «Հեքիաթ-վիպակում հեղինակը փորձում է կերտել «իր» Քաջ Նազարի կերպարը՝ օգտագործելով այդ թեմայով ժողովրդական բանահյուսության տարբերակներից մեկը»:

Վ. Արամյանի «Երանոս Կոմանցին» սովորական մշակում չէ, այլ գեղարվեստական նոր հայեցակետի ու նոր գաղափարի, պայմանականորեն՝ քաջ-նազարության նոր տարբերակի առաջադրում: Ուստի և հիմնական ու նոր գաղափարն էլ իր հերթին ստեղծել է իր նոր հանգույցները և դրանց արդյունք գրական մի նոր կերպար: Ո՞րն է նոր գաղափարը: Նազարությանը ընդդեմը՝ հօգուտ բնական մարդու:

Արամյանը դետալներով հարուստ ասպարեզ է հատկացրել իր Երանոսի ծննդին: Մինչարամյանական ոչ մի մշակման մեջ պատկերված չեն Նազարի ծննդի մանրամասները:

Բոլոր մշակողների գրչի տակ հիմնականում ձևավորված, ամուսնացած մարդ է Դժիկո-Նազարը, իսկ Արամյանի Նազարը սկսվում է տարօրինակ՝ նաև բնական ծննդով: Լինում է և այդպես՝ կապտած, մեռնելու ենթակա, բայց ապրում է նորածինը: Երանոսի ծննդի պահը փոթորիկն է, որը ենթադրում ու պայմանավորում է ոչ սովորական փոթորկածին մահկանացուի լույս աշխարհ գալը: Տեր Հոր՝ կարմիր ու սպիտակ թելերից կապած նարոտը «արյան ու ջրի խորհրդանիշ է»: Իմիջիայլոց, հետագայում այս նարոտն իր խորհրդանշական տարողությամբ գեղարվեստական շրջանառության սեջ չի դրվում:

Մյուս դետալը. դռան շեմին նորածնի հոր ոտքին գիպչող, հորն ու քահանային գետին տապալող «փափուկ մի բանը», որը կնքահայր է դառնում նորածնին, գերբնական չար ուժերի ներկայացուցիչն է (վերջապես ստեղծված հայկական մի սատանա): Նա երկրորդ անգամ է գետին տապալում հոգին ավանդող

---

[1] *Սարգսյան Մ., Քաջ Նազար. Ե., 1980:*

[2] *Արամյան Վ., Երանոս Կոմանցի, Ե., 1991:*

[3] *Սարգսյան Վ., Քաջ Նազարի գրական հետագիծը, Ե., 1991:*

տերտերին ու չքվում է, սատանա, որը նորածնին տալիս է առաջին՝ ինչ-որ անորոշ գերբնական ուժ ու շնորհք: Սատանան փրկում է մահվան ենթակա նորածնին. «Արդեն այնպես ճչաց, ինչպես ճչում են առողջ նորածինները, և որպես նշան առողջության՝ առատ շատրվանեց»: Այս սո՛ւրբ ծննդի երրորդ մանրամասը կտրված պորտալարն է, որը տանում է առաջին ագռավը: Հաջորդը գնչուներն են, որոնք և այս հեքիաթ-վիպակ գաղափարական միջուկի և պատումի ծավալման նախադրություններն են նշում. «Սրա կյանքի գիծը ոչ մի տեղ չի ընդհատվում: Ճակատը նեղ է, աջ բազուկը թույլ, աչքերը լիքն են սրբազան սարսափով: Գլխին թագ է երևում, բայց գլուխը թագակիր չէ: Շուրջը քարասիրտ հսկաներ, գիտուններ: Անունը երկինք է հասել, բայց աստվածամերձ չէ... Բախտավոր լինի»:

Հաջորդ դետալը «ահագին քիթն է»: «Բոլոր կատաղի զորավարները մեծ քիթ են ունեցել և երկչոտ հայացք, փոքր հասակ, ծաղկատար դեմք և նեղ ճակատ»: Այս նախանշաններից և ոչ մեկը պատումի մեջ չի գործում և սոսկ կոլորիտային խտացում է՝ նախապատրաստող և ընթերցողի հետաքրքրությունը գրգռող. միայն այսքանը:

Մյուս դետալը նորից ագռավ է՝ ագռավ երկրորդը, բայց ոչ թե կտրված պորտալար տանող, այլ մարդկային աչքերով մանկանը նայող ինչ-որ առեղծվածային ուժի ներկայացուցիչ: Այուսը տեսլային է՝ դարձյալ երկնքի դահի պատկերով, որը Բախտի մարդկային, երկրային երազանք-ցանկության միջանկյալ նովելային պատում է, Բախտի՝ երկիր իջնելու և նորածնի կրծքի տակ բուն դնելու պատմությունը: Նախկին՝ «դասական» մշակումների (Թումանյան, Իսահակյան) վերջնամասային ելքի ընդհանրացումների կոնկրետացումն է, որը Արամյանի գրչի տակ տեղափոխվել է մուտք և այդտեղից է սկսում իր կոնկրետ գործունեությունը. «Դու կարող ես լինել մեկի բախտը, այսքան մարդկանցից միայն մեկը կարող է բախտավոր լինել, ամբողջ մարդկությունը բախտավոր լինել չի կարող... Դու կարող ես մեր այս հողագունդը ավերել, փոշի դարձնել: Հետ դարձիր, մի իջնի, դու թշնամու պես կավերես այս երկիրը: Դու կարող ես խենթացնել առանց այդ էլ գազազած ու խենթացած մարդկությանը»: «Առանց բախտի մարդիկ ապրում են և դարձյալ կապրեն, բայց առանց հույսի մարդը չի ապրի»: Բախտի երկիր իջնելուն դիմադրում են խիստ այժմեական երկրային տերերը. Զարությունը, Զախորդությունը, Թշվառությունը, Հոգսը, Կարիքը, Սովն ու Վիշտը, Հույսն ու Դաժանությունը:

Արամյանական մյուս նորամույծ դետալը. մեկամյա Երանոսին նշանում են հարևանի մի քանի օրական Նշխունի հետ: Ծննդյան մանրամասերի առատությունն ամփոփում է բախտավոր մանկան բախտավոր ընտանիքը, որը և նախանձի առարկա է դառնում՝ անդամ այդ բախտավորությունից օգտվող գյուղի համար:

Երանոսի կերպարի կարևորագույն հատկանիշը ավանդական-դասական վախը չէ, այլ ընդհանրապես բնության և մասնավորապես նրա շնչավոր որոշ բաղադրիչների՝ թռչունների ու կենդանիների, ինչպես նաև բնական տարերքների տարերային լեզուն հասկանալը, նաև քնելը: Ուրեմն, Քաջ Նազարի դասական կերպարի հիմնական հատկանիշ Վախը չկա այս ոչ նազարացու Երանոսի կերպարում: Չկան նաև մյուս ածանցյալները՝ գլուխգովան, փչան, պարծենկոտ և այլն: Չկան Դժիկո-Նազարի «դասական» մյուս հատկանիշները, չկան հեքիաթի սյուժեի ողնաշարային, անհրաժեշտ հիմնական հանգույցները՝ ճանճեր, վագր, ծառ և այլն: Այս հեքիաթ-վիպակն իր ֆաբուլայով կատարյալ ուրիշ պատում է, և

որոշ առումներով տարբերակ հնարավոր չէ համարել: Բայց եթե Արամյանի մշակումը, խարակտերային առումով, ընդհանուր եզրեր չունի Քաջ Նազարի կերպարի հետ և ինչ-որ չափով հակա Նազար է, ապա տարբերակային առնչություն ունի Նազարության գաղափարի հետ: Արամյանի Երանոսը քիչ կապ ունի Սրվանձտյանցի գրառած և Թումանյանի ու Դեմիրճյանի, մյուսների շնորհիվ «դասական» դարձած Նազարի հետ: Բախտ ունենալու հատկանիշն է միայն Արամյանի Նազարինը: Սա էլ առանձնացված է, ընդգծված է այս հատկանիշը՝ մտցված տեսլային, ի վերուստ ստեղծված Բախտի կերպարի մեջ, որը կարող է բուն դնել ոչ միայն Նազարի, այլև ցանկացած մարդու կրծքի տակ: Եվ քանի որ Նազարն էլ մարդ է, ուստի միայն այսքանով է Երանոսը նման «դասական» Նազարին:

Վ. Արամյանի կերտած կերպարում առաջնային հատկանիշ է բնական մարդու անմեղությունը: Առտնին, սոցիալական, քաղաքական, հասարակական և մարդկային այլ հանրային հանգամանքներով, կապերով ու փոխազդեցություններով չպղծված մարդը: Երանոս բնական մարդու ուժը սրա մեջ է, նրա բախտն էլ է պայմանավորված դրանով: Հաղորդակցումը հանրային կյանքին ուժազրկում է Երանոսին, արժեզրկելով դարձնում սովորական, մյուսներին նման մի մարդ, որն այլևս գերբնական հատկանիշներ չունի՝ թռչուն-կենդանիների լեզուն հասկանալու և նրանց վրա ազդելու: Երանոսի բնաձայնությունը՝ ավանակի պես զռալն ու դայլի նման ոռնալը, որոնք փրկում են հայրենիքը, կերպարային հատկանիշներ են, այն է՝ դրվում են գեղարվեստական շրջանառության մեջ: Երանոսը չի կարողանում կատարյալ գրաճանաչ դառնալ, բայց ուշքն ու միտքը բնության երևույթներն են, և լավ է ճանաչում-հասկանում թռչունների լեզուն ու դրանց օգնությամբ թարգմանաբար կռահում է վերահաս փոթորիկը, լուծում է աքաղաղի հանելուկը: Դեռ պատանի է, երբ տեղի է ունենում առաջին հարձակումը Երանոսի հայրենիքի վրա: Երանոսը Ձենով Օհանի տարատեսակն է, միայն թե նրա հզոր ձայնը հիպերբոլիկ-մետաֆորային է և կախարդական բովանդակություն ունի: Տեսլային վար անող մի ծերունի նրան «Նազովրեցու որդի» է կոչում: Նա, հասկանալով եզների լեզուն, ազատ է արձակում նրանց, և բնության բնական զավակը մտնում է բնական պսակի տակ՝ ամուսնանում իր նշանածի հետ՝ մինչև վերջ հավատարիմ մնալով կնոջը:

Անբնական բաներն անհասկանալի են Երանոսին. «Երանոսը դժվարությամբ է հասկանում քահանային, սակայն լավ դիտի իր գյուղը, շրջապատը, ընտանի ու վայրի կենդանիներին, դիտի գյուղի մերձակա աղբյուրը», որը «անարտասանելի անուն ուներ», աղբյուրի անունն անբնական է, ուստի և Երանոսի համար անարտասանելի: Երանոսի կերպարի բարձրակետերից է նրա ու տերտերի հանդիպման տեսարանը. «Գնացեք, տե՛ր հայր, մի թագավոր բերեք մեր երկրի համար, թող մեր երկիրն անտեր չմնա»: Դասական Նազարն անընդհատ երազում էր թագավորելու մասին և հասնում է գահի, իսկ սա չի էլ ցանկանում լսել այդ մասին: Երանոսը հասկանում է ոչ բնականի էությունը, նրա կործանարար և ի վերջո, անմիտ օրենքները: Երանոսը ոսկին և մյուս թանկարժեք նվերները բաժանում է գյուղի աղջիկներին՝ մյուսների նման վերցնելով ընտանի մի քանի կենդանի: Կերպարն ամբողջացնող է նաև տերտերի՝ իր մահից առաջ աղոթք-խնդրանքը, որպեսզի Երանոսը չգիտակցի իր բախտի ուժը: Երանոսը հիմնականում դրական կերպար է և, եթե Նազարի «տարբերակ» է, ապա սա կատարյալ դրական Քաջ Նազար Առաջինն է մեզանում:

Կերպարային ճշտող, լրացնող-հարստացնող երկրորդական մանրամասներից ու պատկերներից հետո կարևոր հանգույցներ են պատերազմները, որոնք գուցե և մեկը պիտի լինեին, սակայն մի քանիսն են, ըստ երևույթին, նաև հետևյալ առումով. առաջին պատերազմում Երանոսի գերբնական ուժը խտացնող կամքին են ենթարկվում ավանակներն ու ձիերը, երկրորդում մարտի են նետվում բուերն ու չոբանխաբուկ թռչունները: Երկրորդ պատերազմը գիշերամարտ է (իմիջիայլոց, բոլոր պատերազմները պաշտպանողական են: Հարձակվում են Երանոսի Ծոփաձոր երկրի վրա): Բացի թռչուններից, ճակատամարտին մասնակցում են նաև կայծակները և զարկելով պատռում են երկնքի «ջրով լի տկերը», հորդ անձրև տեղում. «Դու արթնացրիր քո սիրած բնության ուժերը, և այդ ուժերը զինաթափեցին անբնական ուժերը»: Երանոսի երկրի դեմ երրորդ՝ միացյալ արշավանք-պատերազմում թշնամին դարձյալ պարտություն է կրում՝ գայլերի և Ֆլյուլեքս մոծակի օգնության շնորհիվ: Սա երևի Երանոսի գաղտնի զենքն է: Քահանան խմբեր է ուղարկում, որպեսզի վախեցած զինվորներին սարսափեցնի ստահոդ լուրերով, վախեցնի ոչ թե մտավորականությանը, այլ հատկապես տգետ ժողովրդին. «Մտե՛ք տգետ ժողովրդի մեջ, նրանց հոգիները բաց են, լեզուները՝ փակ, բայց եթե հավատան ձեզ, ամբողջ կյանքների ընթացքում այդ հավատին կմնան: Իսկ եթե նրանց բերանները բացվի՝ մեկը հազար կդարձնեն, հազարը՝ տասը հազար և պղտոր ջրի նման երկիրը կծածկեն տգիտության տիղմով»: Բոլոր ժամանակների հետ զուգահեռվող ինչպիսի՜ տխուր համայնապատկեր:

Նազարի դերով հանդես եկող Երանոսը, ի տարբերություն Մ Սարգսյանի հերոսի, չի ցանկանում աշխարհին տիրել. «-Եթե սրանց թագավորն ուզի, առանց կռվի, զենք ու զրահի աշխարհի տերը կդառնա: Եթե ուզի»: Բայց չի դառնում, նրան պետք չէ ամբողջ աշխարհը: «Ամբողջ աշխարհն ի՞նչ անի»:

Հաջորդ հանգույցը ևս «պատերազմական» է՝ մտած դիվանագիտության խնամախոս ձևի մեջ: Գոռգոռ թագավորը դալիս է՝ այս անգամ իր աղջկա ամուսնության առաջարկով, աղջիկ, որի ձայնից կանգնում կամ պտտվում են ջրաղացքարերը: Դիվանագիտական այս փորձությունն ավելի ծանր է ու մեծ: Կիմանան, որ Ծոփաձորը թագավոր չունի, և կարշավեն, կավերեն երկիրը. «Մենք չենք կարող թույլ տալ, որ մեզ ճանաչեն, մեր փրկությունը նրա մեջ է, որ չիմանան, թե մենք ով ենք, ինչ ենք, որովհետև մենք ոչինչ ենք, մեզ պահում են մեր իսկ հնարած լեգենդները և Երանոսի սուր միտքն ու բնության լեզուն իմանալը: Մեր հզորության մասին լեգենդը մեր թշնամիներն են ստեղծում, որովհետև մեր բախտը մեզ հետ է: Այդ բախտը նստած է մեր Երանոսի կրծքի տակ. նա էլ պետք է դառնա մեր թագավորը: Գոռգոռ թագավորը կարծում է, թե մեր թագավորը Երանոսն է՝ թող կարծի»: Հանգուցալուծումը թագավորի հիվանդանալն է, ուստի Գոռգոռը թողնում է նվերներն ու հեռանում:

Ծնվում են Երանոսի որդիներն, ու այս անգամ մահանում է մյուս տերտերը: Ինքը ծնվեց՝ առաջին տերտերը մահացավ, որդիները ծնվեցին՝ հեռացավ երկրորդ տերտերը: Բնականը՝ այս զույգի ծնունդն ու տերտերի մահը, Երանոս մարդու անբնականության սկիզբն են դնում: Սա կենտրոնական գաղափարի եզրահանգումն ու այս մշակման ավարտն է: Ինչ-որ բան անավարտ է մնում, ինչ-որ բան սխա՞լ է այս հեքիաթ-վիպակում, այս մշակման մեջ: Եվ մի՞թե սա մշակում է: Եվ այո՛, և առավել՝ ո՛չ: Այնքան է հեռացված ավանդական պատումից, որ «Քաջ Նազարի» ի՞նչ մշակման մասին խոսք կարող է լինել, երբ գործ ունենք այլ պատումի և հիմնականում այլ հանգույցների և, ի վերջո, դրանց արդյունք դրական

այլ ու նոր, իրոք որ ինքնատիպ նոր մի կերպարի հետ, որը հիմնականում քիչ, համարյա ոչ մի կապ չունի դասական դարձած պատումի ու հասարակ անուն դարձած Քաջ Նազար կերպարի հետ: Կարևոր և ուրիշ մեծ գաղափար է ընկած այս գրքի առանցքում բնական, բնատուր մարդու հիմնախնդիրը, որն այդպիսին լինելով՝ և մեզանում, և աշխարհում խիստ արդիական է: Ասվածն ապացուցում է հեքիաթ-վիպակի ընդհանրացնող ավարտը, որը համահունչ է ոչ միայն ազգային, այլև համաշխարհային այսօրին՝ դարավերջի աշխարհին ու մարդուն ընդհանրապես: «Բնության մարդու մեջ անբնական թվացող երևույթներ մտան: Խաբում էին իրար, ծեծում մարդկանց, թալանում, բայց այդ բոլորին Երանոսը չէր մասնակցում: Նրան թվում էր, թե իր ճանաչած աշխարհը փոխվում, դառնանում և կասկածելի է դառնում, նրան թվում էր, թե իրենից հեռացել էր Բախտը, թռչուններն ու գազաններն այլևս իրեն չէին հասկանում, իր ձայնը չէին լսում, այլ կերպ էին հնչում նաև նրանց ձայները: Նրանք չէին արձագանքում ոչ իր կանչերին, ոչ էլ իր զգուշացնող ձայնին: Փոխվել էր բնությունը»:

Վիպակում մեր օրերի և մեր կյանքի հետ ինչ-ինչ հեռահար զուգահեռներ կան, համադրումներ, օրվա հրատապ թեմաներով գրված և ստեղծված մտքեր ու գաղափարներ, որոնք էլ չափազանց արդիական չունչ են հաղորդում այս ուշագրավ գործին:

НОВЫЙ ВАРИАНТ ТРАДИЦИОННОГО ГЕРОЯ

САНТОЯН М.Г.

Резюме.

Повесть В.Арамяна “Еранос Крманци” в корне отличается от обычных обработок образа Храброго Назара и выдвигает новое художественное мировоззрение и своеобразную идею отображения героя. В основе ее лежит еще большая гуманизация героя. Эта целостная картина воплощена в повести в душевной драме героя, в отрицании старого, восприятии нового. Подобное противоречие порождает еще большую художественную убедительность страданий героя.